հիւսիսից՝ գինուած թուրք գիւղացիները։ Հայ գաղթականութիւնն ու նահանջող զօրամասերը թալանւում ու կոտորւում էին ամէն կողմ։

Թիւրքերի հիւսիս շարժւելու հետեւանքով անասելի իրարանցում առաջ եկաւ և Թիֆլիսում՝ վրաց և հայկական շրջաններում։ Վրացիները սկսեցին պատրաստուել դիմադրութեան։ Թիֆլիսը յայտարարուեց պաշարողական վիճակում. զօրաշարժի ենթարկուեց կարմիր գւարդիան։ Քաղաքի շուրջը, բարձունքների վրա, դիրքեր փորուեցին, նշանակուեցին պահակներ։

Անտանելին, սակայն, հայ ժողովրդի, Թիֆլիսում խռնուած կարսեցի, չիրակեցի, արևմտահայ բազմահազար գաղթականութեան վիճակն էր։ Մանաւանդ, շատ էին ջղայնանում արեւմտահայերը, որոնք, հասկանալի պատճառներով, աւելի էին սարսափում թիւրքական արշաւից։ Նրանց դրութիւնը ահռելի էր։ Ի՞նչ անել։ Ո՞ւր գնալ։ Եւ ահա ծայր տուեց մի խուճապային փախուստ դէպի Հիւսիսային Կովկաս։ Հազարաւոր մարդիկ, ծեր ու երեխայ, գիւղացի ու քաղաքացի, աշխատաւոր ու մտաւորական, — ով ինչով կարող էր — խուժեցին դէպի ռազմավիրական ճանապարհը։ Հոսանքի մի ծայրը հասել էր արդէն Վլադիկաւկազ ու Արմաւիր, մինչ միւսը դեռ նոր էր դուրս գալիս Թիֆլիսից։ Օրեր անընդհատ, Թիֆլիսից շարժւում էին հազարաւոր սայլեր, կառքեր, ինքնաշարժներ, դրաստներ, ֆուրգոններ՝ բեռնաւորուած տնային իրերով, կանանցով ու երեխաներով։ Շատերը իրենց ունեցւածքը չնչին գնով ծախում էին Թիֆլիսի փողոցներում — գորգ, կապերտ, բարձ, անկողին, վերմակ, կարասիներ, ամանեղէն... Վլադիկաւկազ գնացող փոխադրութեան միջոցների սակագինը բարձրանում էր տասնեակ ու հարիւրաւոր անգամներ։ Մի մարդու տեղը ֆուրգոնում արժէր մինչև 10,000 ռուբլի։ Մարդիկ վերջին կոպէկն էին տալիս, միայն թէ կարողանան հեռանալ։

Թիֆլիսից Հիւսիսային Կովկաս մեկնեց և Ապահովութեան Խորհուրդը ամբողջ կազմով։ Այս պարագան աւելի ևս սաստկացրեց ընդհանուր խուճապը։ Գաղթը կատարւում էր անկազմակերպ, տարերային կերպով։ Պարենաւորման գործը ճանապարհին չափազանց անբաւարար էր, ապահովութիւն չկար, և յարձակումները գաղթականների վրա սովորական էին։ Այսպէս, մայիս 23-ին Լարսից հեռագրում էին Հ. Ազգ. Խորհրդին. «Այսօր ինգուշները Նոր-Լարս կայարանում պահեցին աւելի քան 10,000 գաղթականներ, թոյլ չտուին գնալու Վլադիկաւկազ և վերադարձրին Կաղբէք, ուր նրանց սպասում է սովն ու ցուրտը»։

Մայիս 25-ին Ազգ. Խորհրդի ներկայացուցիչը հեռագրում էր Դուշէթից. «Հարիւր հազար սոված ու մերկ գաղթականներ հաւաքւել են Մցխեթի, Դուշէթի միջև և աւելի հեռուները։ Ո՛չ մի օգնութիւն և ո՛չ մի տեղից։ Փախստականների մէջ սկսում են հիւանդութիւններ։ Կան մահուան դէպքեր։ Գիշերելու տեղ չկայ, և ամենքը գիշերում են բաց երկնքի տակ, ցրտին։ Ջկայ ո՛չ հաց, ո՛չ եռացրած ջուր. չկան սննդատու կայաններ — ամենքը թողուած են ճակատագրի կամքին։ Բժշկական օգնութիւն էլ չկայ։ Մարդիկ հազարներով գնում են ոտքով, առանց օգնութեան որև է յոյսի... կացութիւնը յուսահատական է»։